ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 20.11. 2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
8. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
9. Լ. Մարտիրոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ՊԿ
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համալսարանի «Տնտեսական գործունեության, գնումների համակարգման» բաժնի պետ Սայաթ Մինասյանի ներկայացրած զեկուցագրի մասին

2. ՇՊՀ-ում դպրոցների տնօրենների վերապատրաստման դասընթացի կազմակերպման և անցկացման մասին

3. Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի ձևավորման մասին

1. ԼՍԵՑԻՆ՝

Համալսարանի «Տնտեսական գործունեության, գնումների համակարգման» բաժնի պետ Սայաթ Մինասյանի ներկայացրած զեկուցագրի մասին

(**հաղ.**՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան)

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաշվի առնելով ՇՊՀ-ի «Տնտեսական գործունեության, գնումների համակարգման» բաժնի պետ Սայաթ Մինասյանի զեկուցագրում ներկայացված այն իրողությունը, որ մահացել է դռնապահ-գիշերապահ Գագիկ Պետրոսյանի մայրը և ընտանիքը գտնվում է սոցիալական ծանր վիճակում՝ բավարարել Սայաթ Մինասյանի զեկուցագրում նշված խնդրանքը:

Հանձնարարել համալսարանի ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ - գլխավոր հաշվապահ Ռ. Քալաջյանին՝ Գ. Պետրոսյանին տրամադրել 100 000 ՀՀ. դրամ (հարյուր հազար) միանվագ դրամական օգնություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ում դպրոցների տնօրենների վերապատրաստման դասընթացի կազմակերպման և անցկացման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երաշխավորությամբ մեր համալսարանում կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Գիտական խորհրդին կից՝ ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի ձևավորման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ռազմավարական ծրագրի մշակման նպատակով գիտական խորհրդին կից հանձնաձողով պետք է ստեղծվի և նշեց, որ հանձնարարել է գիտքարտուղարին համապատասխան ընթացակարգն ուսումնասիրելու և ներկայացնելու ռեկտորատի անդամներին:

Գիտական քարտուղար Կ. Պետրոսյանը ներկայացրեց, որ վերոգրյալ հանձնաժողովի ձևավորման կարգը ամրագրված է «ՇՊՀ-ի զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և իրականացման արդյունքների գնահատման հայեցակարգում», որը հաստատվել է 31.01.2018թ.-ի թիվ 24 գիտական խորհրդում: Տիկին Պետրոսյանը ներկայացրեց, որ հանձնաժողովի կազմում ըստ հայեցակարգում ամրագրված կետի պետք է ներգրավվեն.

1. աշխատանքային հանձնախմբի ղեկավար՝ ռեկտոր

աշխատանքային հանձնախմբի անդամներ՝

2. ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր,
3. գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր,
4. որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն,
5. ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի տնօրեն,
6. ֆակուլտետների դեկաններ,
7. քոլեջի տնօրեն,
8. ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ,
9. իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժնի վարիչ,
10. ռեկտորի օգնական,
11. ՈԻԳԸ նախագահ,
12. ՈԻԽ նախագահ,
13. գործատուներ,
14. շրջանավարտներ,

13 պրոֆեսորադասախոսական կազմի այլ ներկայացուցիչներ՝ ռեկտորի ներկայացմամբ:
Պարոն Սերոբյանը նշեց, որ այս հարցին անդրադառնալու են նաև առաջիկա գիտական խորհրդի նիստում և առաջարկեց հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝
ռեկտորի ԺՊ — Ե. Սերոբյան

Ռեկտորատի քարտուղար,
գիտական քարտուղար՝ — Կ. Պետրոսյան

Պրոռեկտոր-աշխատակազմի
ղեկավար — Գ. Նիկողոսյան

Ռեկտորի խորհրդական՝ — Ս. Շահպարոնյան

Ֆինանսատնտեսական
վերլուծությունների,
ծրագրավորման և
հաշվապահական հաշվ. բաժնի
վարիչ-գլխավոր հաշվապահ՝ — Ռ. Քալաջյան

Արհեստակցական
կազմակերպության նախագահ՝ — Վ. Խաչատրյան

Գիտական քաղաքականության,
որակի ապահովման և
կառավարման կենտրոնի տնօրեն՝ — Ա. Սարգսյան

Արտաքին համագործակցության
և հասարակայնության հետ
կապերի կենտրոնի տնօրեն՝ — Հ. Մելքոնյան

Գրադարան-ուսումնագիտական
խորհրդատվությունների,
նորարարությունների և SS
կենտրոնի տնօրեն՝ — Թ. Խաչատրյան

Ուսումնամեթոդական
գործընթացի կառավարման
կենտրոնի ~~փոխտնօրեն~~ պրոռեկտոր դիտարկման ԴՅ — Ն. Ավետիսյան

Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետի դեկան՝ — Բ. Պողոսյան

Հումանիտար գիտությունների և

արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան